ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
PHILOSOPHY AND POLITICS

ՄԵԼԱՆՅԱ ԴԱՎԹՅԱՆ*
Քաղաքական գիտությունների թեկնածու
ՀՀ Ոստիկանության կրթահամալիր
melania.davtyan@mail.ru

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ» ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Դավիթ Անհաղթ, քաղաքական գոյ, քաղաքական կարողություն, քաղաքական արվեստ, քաղաքական գիտություն, քաղաքական իրողություն, քաղաքական մահ:

Ներածություն

Ինչպես բոլոր գիտությունների, այնպես էլ քաղաքական գիտության համար մեթոդական հիմք է հանդիսանում փիլիսոփայությունը, որի հետազոտման տիրույթում են գտնվում. գոյաբանությունը, իմացաբանությունը, արժեքաբանությունը և մարդաբանությունը: **Նպատակ ունենալով մուտք գործել հայրենական քաղաքագիտության դաշտ և լուսաբանել հայրենական քաղաքական մտածողության ակունքները, փորձել ենք այս գիտության հիմնական սկզբունքները հենել հայ փիլիսոփայության վրա**: Հայրենական քաղաքագիտությունը կարելի է հարստացնել քաղաքական փիլիսոփայության տիրույթում գտնվող՝ քաղաքական գոյաբանությամբ, քաղաքական իմացա-

* *Հոդվածը ներկայացվել է 11.09.20, գրախոսվել է 22.09.20, ընդունվել է տպագրության 04.12.20:*

բանությամբ, քաղաքական արժեքաբանությամբ և քաղաքական մարդաբանությամբ:

Հասարակական ու պատմական ամեն մի սահմանազատված շրջան ունի իրեն բնորոշ փիլիսոփայությունը՝ աշխարհայացքը, մտածողության ձևն ու ճաշակը, կյանքն ընկալելու և վերարտադրելու, վերլուծելու ու եզրահանգելու ինքնատիպ մեթոդը: Փիլիսոփայությունը գիտակցության ձև է, այն դրսևորվում է իրեն հատուկ վարքաբանությամբ: Փիլիսոփայական համընդհանուր մտածողությունը առկա է մարդկանց կյանքի բոլոր ոլորտներում՝ հոգևոր-մշակութային, նյութական-տնտեսական, սոցիալական-խմբային, ինչպես նաև քաղաքական-պետական ու իրավական ոլորտներում:

Քաղաքական փիլիսոփայությունը փիլիսոփայության այն ճյուղն է, որն ուսումնասիրում է քաղաքականության, քաղաքական արժեքների, քաղաքական իրականության էությունը և մտավոր տարածքների ու քաղաքական գաղափարների վերլուծությունը:

Քաղաքական փիլիսոփայությունը գիտելիքների այն ոլորտն է, որն ուսումնասիրում է քաղաքականությունն ամբողջությամբ, նրա բնույթը, մարդու համար ունեցած նշանակությունը, անձի, հասարակության և կառավարության փոխհարաբերությունները: Այն զարգացնում է այնպիսի գաղափարներ, որոնք տալիս են քաղաքականությունը գնահատելու ընդհանուր չափանիշներ:

Քաղաքական փիլիսոփայությունը պատմականորեն կապված է եղել մարդու՝ քաղաքական երևույթների հուսալի գիտելիքների որոնման հետ: Այնուհետև, այն սկսել է հիմնականում զբաղվել գաղափարների ուսումնասիրման պատմությամբ: Հիմա նրա հետ մրցակցության մեջ են էմպիրիկ տեսությունները, որոնք իրենց հիմքերը որոնում են ոչ թե բանականության, տրամաբանության կամ ինտուիցիայի, այլ գիտականորեն հաստատված տեսությունների մեջ: Այնուամենայնիվ, քաղաքական փիլիսոփայությունը կարևոր դեր է խաղում ժամանակակից քաղաքագիտության ու նրա ուսումնասիրության մեջ: Քաղաքական փիլիսոփայության *օբյեկտը,* ժամանակակից համացանցային քաղաքագիտական բառարանում սահմանվում է որպես անդրադարձում (ռեֆլեքսիա), իսկ *առարկան*՝ քաղաքական անդրադարձման հիմնական հասկացություններ[1]:

[1] https://ru.wikipedia.org/wiki/ Политическая_философия

Քաղաքական փիլիսոփայությունը փիլիսոփայական գիտություն է, որն ուսումնասիրում է քաղաքականության հիմնարար խնդիրները, դրա առավել խորքային, էական հիմքերը:

Քաղաքական փիլիսոփայությունը մշակում է քաղաքականության հիմքում ընկած համապարփակ, վերացական, իդեալական սկզբունքները: Այն մեթոդաբանական նախադրյալ է նորմատիվ քաղաքական գործունեության համար[2]:

Քաղաքական փիլիսոփայության խնդիրները հետազոտող գիտնականները[3] փնտրում են քաղաքագիտական հասկացությունների՝ պետության, իշխանության, գաղափարախոսության փիլիսոփայական հիմքերը, կապը քաղաքական պրակտիկայի հետ և նույնականացումը քաղաքական տեսության հետ: Ուսումնասիրությունները թույլ են տալիս համոզվելու, որ այս հիմնահարցերին բավական խորությամբ ու ամբողջությամբ մեզանում առաջինն անդրադարձել է վաղ միջնադարի հայ եռամեծ, հռչակավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթը: Դրա համար էլ առաջին անգամ քննարկման նյութ ենք դարձրել նրա «քաղաքական փիլիսոփայության» սահմանումները:

Քաղաքական փիլիսոփայության էությունը

«Փիլիսոփայությունը ինչ-որ անօգուտ բան չէ,- գրում է Անհաղթը,- դրա մասին է ասում Պլատոնը՝ իր խոսքն ուղղելով ոմն Թեոդորոսի. «Մեզ շնորհված է այնպիսի բարիք, ով Թեոդորոս, որից ավելի լավը երբեք չի եղել և էլ չի շնորհվելու մարդկանց՝ աստվածների կողմից»[4]:

Բնականաբար, Դավիթ Անհաղթի «քաղաքական փիլիսոփայության» հիմնահարցը պետք է քննարկենք նրա փիլիսոփայական սահմանումների միջոցով, իսկ դա նշանակում է. մուտք գործել հայրենական քաղաքական փիլիսոփայություն, որտեղ հայ մարդը ի՛ր քաղաքական աշխարհայացքի մեջ է, քաղաքական կյանքի ի՛ր ընկալումների ու գնահատումների մեջ: Հայրենական քաղաքագիտությունը դուրս բերել «գիտությունների ակունքից», նշանակում է ավելի լավ տեսնել այս գիտության զարգացման ընթացքը, նկատել ու ընդհանրացնել հայ քաղաքական-փիլիսոփայական մտածողությունը, հայ քաղաքական կյանքում էական դեր խաղացող հասկացությունները, գաղափարներն ու գաղափարախոսությունները:

---

[2] Քաղաքագիտություն, 2004:

[3] **Лео Штраус** 2000. **Алексеева** 2017.

[4] **Անհաղթ** 1980, 125, **Պլատոն** 2011, 130:

Ազգերի ու էթնոսների տարբերությունը մատնանշող[5] շատ հատկանիշների մեջ կարելի է առանձնացնել նաև **քաղաքական իրավիճակի զգացողության** հատկանիշը, որը կարելի է ի հայտ բերել միայն ազգային քաղաքական փիլիսոփայության միջոցով: Հայտնի է, որ ըստ քաղաքական զգացողության՝ այսինքն քաղաքականությունը ընկալելու, քաղաքական կողմնորոշման ու ճկունության, ազգերն ու ժողովուրդները տարբերվում են միմյանցից: Պատահական չէ, որ աշխարհում ապրող 5 հազարից ավելի էթնոսների մեջ մոտ 200 քաղաքական էթնոսներն են ապրում իրենց ազգային պետություններով: Անընդհատ շարժուն ու փոփոխական քաղաքական կյանքը ավելի լայնորեն ընկալելու, ըմբռնելու հնարավորություն կարող է ընձեռնել քաղաքական հասունությունը: Այն կարող է իր ազդեցությունն ունենալ ոչ միայն քաղաքական պրակտիկայի ու տեսության, այլ նաև քաղաքական կանխատեսումների մեջ:

Հայ ժողովուրդը իր ապրած պատմական բարդ կյանքով, հարյուրամյակներ շարունակ բախվել է իր կեցության ու գոյության խնդիրներին, դրսևորել քաղաքական մտածողության՝ ճանաչողության ինքնատիպություն, արժևորել իրականության մեջ քաղաքական իրականության ինքնատիպ գնահատականով, հանդես է եկել մարդկային օրինապահ, անձնազոհ վարքով ու քաղաքակրթությամբ: Հայ քաղաքական գոյաբանության, իմացաբանության, արժեքաբանության ու մարդաբանության դրսևորումները նույնպես առկա են Դավիթ Անհաղթի «քաղաքական փիլիսոփայության» մեջ:

Այժմ տեսնենք թե ինչպես են դրսևորվում հայ փիլիսոփայությունն ու հայ քաղաքական փիլիսոփայությունը, ինչպես կարող է հայ քաղաքական փիլիսոփայությունը դառնալ հայրենական քաղաքագիտության ուսումնասիրության մեթոդ ու գիտելիք:

Նկատենք, որ որքան էլ աշխարհաքաղաքականության մեջ քաղաքականությունը պայմանավորված լինի տնտեսական ու ռազմական հզոր բազայով, այնուամենայնիվ, այդ հզորության հիմքերը նախ իդեալական են, ռացիոնալիստական, քանի որ դրանց հիմքում կանգնած են մարդիկ՝ իրենց գաղափարներով, մտածողական ընդունակությամբ, բանականությամբ ու կամքով, ովքեր գնում են իրենց ստեղծած լեգենդների ու առասպելների, հեքիաթների ու պատկերացումների հետևից: Քաղաքականությունը հասարակական այն ոլորտն է, որտեղ ամենաառաջնակարգ տեղն է գրավում իդեալական փիլիսոփայականը:

[5] **Մանուչարյան** 1988, **Նալչաջյան** 2001:

Հայ փիլիսոփայության տեսական գանձարանը անտարակույս բացվում է Դավիթ Անհաղթով: Ըստ հետազոտողների, այդ իրապես անհաղթ փիլիսոփան, ծնվել է V դարի 70-ական թվականներին, Տարոնի Ներգին գյուղում, մահացել՝ VI դարի կեսերին: Փիլիսոփայական կրթությունը ստացել է Ալեքսանդրիայում, նորպլատոնական դպրոցի ներկայացուցիչ Օլիմպիոդորոս Կրտսերի մոտ: Այդ տաղանդավոր հայը քաջատեղյակ էր ոչ միայն ժամանակի գիտությունների համաշխարհային ձեռքբերումներին, այլև ուներ խորապես ազգային նկարագիր և ապրում էր ազգի հոգսերով ու խնդիրներով: Հայտնի է, որ ստեղծագործող մարդը ինչ էլ որ արարի և ավանդի իր սերունդներին, նա նախ և առաջ արտահայտում է իր էությունը՝ իր ստեղծած արժեքներով: Դավիթ Անհաղթն իր փիլիսոփայությամբ է մասնակցում ժամանակի հայ քաղաքական կյանքի խնդիրներին, պայքարում Պարսկաստանի և Բյուզանդիայի ձուլողական քաղաքականության դեմ: Անհաղթի «քաղաքական փիլիսոփայությունը» հոգևոր զենք էր՝ ուղղված հայ ժողովրդի թշնամիների դեմ, ինչպես բոլոր դարերի հրապարակախոսների ու բանաստեղծների հրաշունչ խոսքը:

Հայ ժողովրդի խռովահույզ իրադարձություններով լեցուն պատմական ճակատագիրը, նրա վտանգված լինելու հանգամանքը դարեր շարունակ մտահոգել է հայ մեծերին, դարձել նրանց համար գիտական հետազոտության նյութ, դրել է գոյաբանության տեսություն ստեղծելու անհրաժեշտություն: Ստեղծված իրավիճակն իր շուրջն է հավաքել ամբողջ ազգային կեցության հզոր արժեհամակարգը, որը կոչված էր կերտելու *ազգային պետություն ու ազգային իշխանություն,* որի ներքո հայ ժողովուրդը ապրել է մերթ իրական, մերթ առասպելական կյանքով:

Ի՞նչն է ընկած ազգային կեցության հիմքում, ինչպե՞ս պետք է ճանաչենք այդ հիմքերն ըստ Դավիթ Անհաղթի, ինչպե՞ս փիլիսոփայությունը ծառայեցնենք ազգային կեցության՝ նրա **խնդիրների էությունը** ճանաչելու համար:

Դավիթ Անհաղթը դարեր շարունակ գտնվել է հայ ու համաշխարհային գիտնականների հետազոտության դաշտում: 1980 թ. Դավիթ Անհաղթի մեզ հասած աշխատությունները գրաբարից թարգմանել, առաջաբանը և ծանոթագրությունները գրել ու հրատարակել է Սեն Արևշատյանը: Նրան անդրադարձել են նաև ակադեմիկոսներ Գ. Բրուտյանը, Հ Գևորգյանը, պրոֆեսոր Ս. Զաքարյանը:

Օգտվելով տրամաբանական մտահանգման սիլոգիզմի **աքսիոմից**[6] կնկատենք, որ փիլիսոփայության սահմաններում եղած հատկանիշները և նրա բազմության մեջ գտնվող տեսակների հատկանիշները նույն են: Հետևաբար, եթե «**փիլիսոփայությունն**» իր սահմանների ներսում պարունակում է **«քաղաքական փիլիսոփայությունը»,** ապա հետևելով **սիլոգիզմի աքսիոմին,** կարող ենք ասել, որ փիլիսոփայության և քաղաքական փիլիսոփայության հատկանիշները նույնն են, սահմանումները՝ նման: Խոսելով փիլիսոփայական նմանության մասին, Անհաղթը գրում է. «Պետք է գիտենալ, թե նմանության մասին ասվում է չորս նշանակությամբ, որովհետև իրերը նման են կոչվում այն դեպքում, երբ նույն որակական հատկանիշը դրսևորվում է միևնույն տեսակի բոլոր իրերում:

...Իրերը նման են կոչվում նաև այն դեպքում, երբ նույն որակական հատկանիշը ավել կամ պակաս դրսևորվում է տարբեր տեսակի իրերում:

...Նման են կոչվում իրերը նաև այն դեպքում, երբ տարբեր որակական հատկանիշներ դրսևորվում են տարբեր տեսակների պատկանող իրերում:

...Նմանությունը իրերի միջև լինում է նաև այնպիսին, ինչպես պատկերի և բնօրինակի միջև»[7]:

Նշված նմանության առաջին նշանակությունը ցույց է տալիս փիլիսոփայության ու քաղաքական փիլիսոփայության նմանությունները՝ որպես աքսիոմ:

«Գոյերի գիտություն» է անվանում Դավիթ Անհաղթն իր փիլիսոփայությունը, այսպես է սկսում նրա «Սահմանք իմաստության» (Փիլիսոփայության սահմանումները) երկը. «Յուրաքանչյուր գոյերի համար պետք է քննել հետևյալ չորս հիմնական հարցերը, - գրում է Անհաղթը, - գոյություն ունի արդյո՞ք, ի՞նչ է, ինչպիսի՞ ինչ է, ինչի՞ համար է: Այս հարցերը իրոք քննության արժանի են, որովհետև որոշ իրեր իրականում գոյություն չունեն...որոնց հնարում է մեր մտածողությունը, իսկ որոշ իրեր գոյություն ունեն: Եվ այդ գոյություն ունեցող իրերից որոշ բաների գոյությունը կասկածելի է ...որովհետև դրանց վերաբերյալ կասկածում ենք գոյություն ունեն արդյոք, թե ոչ: Իսկ որոշ իրեր էլ անկասկած գոյություն ունեն,...որոնց գոյությունը ստույգ է: Արդ, իրականում գոյություն չունեցող, ինչպես և կասկածելի գոյություն ունեցող իրերի վերաբերյալ

---

[6] Սիլոգիզմի աքսիոմի համաձայն այն, ինչ հաստատվում է ամբողջ դասի նկատմամբ, հաստատվում է նաև այդ դասի մեջ մտվող յուրաքանչյուր անդամի նկատմամբ, այն ամենը ինչը ժխտվում է ամբողջ դասի նկատմամբ, ժխտվում է նաև այդ դասի մեջ մտնող յուրաքանչյուր անդամի նկատմամբ: **Բրուտյան** 1987, 173:

[7] **Անհաղթ** 1980, 80–81:

պետք է քննել՝ գոյություն ունի՞ արդյոք հարցը. իսկ անկասկած գոյություն ունեցող իրերի վերաբերյալ պետք է քննել ոչ թե գոյություն ունի՞ արդյոք հարցը, այլ ի՞նչ է»[8]:

Մեջբերված հատվածում Դավթի փիլիսոփայությունը վերաբերում է ստույգ, կասկածելի և մտածական գոյերին: Առանձնացնելով քաղաքական փիլիսոփայությունը կնկատենք, որ այս բազմության մեջ են այն քաղաքական գոյերը, որոնք ստույգ են, որոնք՝ կասկածելի, իսկ մյուս մասը՝ մտացածին:

Առաջին քաղաքական հասկացությունը, որը բխում է Դավթի փիլիսոփայությունից, դա **քաղաքական գոյաբանությունն** է: Սա ավելի ակնառու է նրա փիլիսոփայության առաջին սահմանման մեջ, որ «փիլիսոփայությունը գիտություն է գոյերի մասին», հետևաբար. քաղաքական փիլիսոփայությունը գիտություն է **քաղաքական գոյերի** մասին:

Քաղաքական գոյաբանությունը ժամանակակից քաղաքագիտական հետազոտական կատեգորիա է, որի մասին կան բազմաթիվ գիտական հետազոտություններ[9]:

Օ. Պոսպելովայի. «Քաղաքական գոյաբանության և դրա մեթոդական և տեսական համատեքստը» հոդվածում ուսումնասիրվում են ժամանակակից քաղաքական գոյաբանության շարադրման ձևերը:

Քաղաքական գոյաբանությունը (օնթոլոգիան) մի ոլորտ է, որը Պոսպելովայի կարծիքով, այնքան էլ հեշտ չէ հեռացնել քաղաքական փիլիսոփայության ընդհանուր դաշտից: «Քաղաքական կեցությունը», որպես քաղաքական գոյաբանության առաջին օբյեկտ, չենք կարող վերացարկել միայն քաղաքական գործընթացներից, առարկաներից և ինստիտուտներից, որոնց արդյունքում առաջադրված քաղաքական խնդիրը լուծվում է քաղաքական գիտության հետազոտությունների շրջանակներում: Այնուամենայնիվ, բուն քաղաքական և քաղաքական կյանքի էության վերաբերյալ հարցադրումները, չնայած դրանց սպեկուլյատիվ բնույթին, չեն կարևորվում քաղաքագիտության համար: Ցանկացած քաղաքական գործընթացների անդրադարձը ենթադրում է մի տեսակ քաղաքական գոյաբանություն, և եթե մենք չունենք անհրաժեշտ տեսական գիտելիք մեկուսացնելու և գոյաբանության հետևանքները հասկանալու համար, հետևաբար քաղաքական տեսության բազմաթիվ հարցեր և պատասխաններ կարող են մնալ վակուումում: Քաղաքական գոյաբանության

---

[8] **Անհաղթ** 1980, 36:

[9] **Гончаров** 2013, 40–56. **Волчкова** 2019, 56–59: https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-ontologiya-i-ee-metodologo-teoreticheskiy-kontekst/viewer

իրավասության սահմանների ճշգրտումը մեզ թույլ է տալիս ավելի հստակ պատկերացում կազմել քաղաքական փիլիսոփայության տեղի ու դերի մասին՝ հասարակական գիտելիքների համակարգում: Ժամանակակից ուսումնասիրություններում, քաղաքական գոյաբանությունը դրսևորվում է չորս ձևերով.

1) որպես քաղաքականության մասին տեսական գիտելիքները նկարագրելու համակարգված ու ամբողջական միջոց, որտեղ գոյաբանությունը որպես տեսական գիտելիք, իր իրավական տեղն ունի քաղաքագիտության իմացաբանության ու մեթոդաբանության մեջ,

2) որպես քաղաքական բնույթի հարցերի պատասխան,

3) որպես այս կամ այն տիպի քաղաքական գոյաբանական վերլուծություն, որի համաձայն որոշվում է փիլիսոփայական մտածողության հիմնական ուղղությունը,

4) որպես թաքնված քաղաքական հետևանքների բացահայտում, որոնք գտնվում են «ոչ քաղաքական» տեսություններում:

Այս տեսանկյուններից յուրաքանչյուրն ունի իր արժեքը և լուծում է իր խնդիրները՝ բերելով նոր արդյունք, նոր քաղաքական ըմբռնում[10]:

Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունից բխեցնելով քաղաքական ըմբռնման հատկանիշները, կստանանք գոյաբանական հետևյալ հարցադրումները.

1) գոյություն ունե՞ն քաղաքական գոյեր, 2) ի՞նչ է քաղաքական գոյը, 3) ինչպիսի՞ն է քաղաքական գոյը, 4) ինչի՞ համար է քաղաքական գոյը:

Այս հարցադրումներից մեր փիլիսոփան մեծ կարևորություն է տալիս չորրորդ. «*ինչի՞ համար է*» հարցի քննությանը, որովհետև բոլոր գոյերը նրա կողմից դիտվում են որպես մի որոշակի նպատակով գոյություն ունեցողներ, քանի որ «ո՛չ արարիչը, ո՛չ բնությունը, ո՛չ էլ արվեստը ոչինչ չեն ստեղծում իզուր և անօգուտ»[11]:

Եթե վերլուծենք ազգային քաղաքական շատ արժեքներ գոյաբանական 4 հարցադրումներով, հասկանանք քաղաքական արժեքների նպատակն ու օգտակարությունը, ապա կհասկանանք դրանք կորցնելու ոչ միայն մասնավոր, այլև փիլիսոփայական՝ համընդհանուր պատճառները: Օրինակ դիտարկելով «ազգային պետությունը» որպես քաղաքական գոյ, ենթարկելով Դավթի քաղաքական գոյաբանական հարցադրումներին, կստանանք հետևյալ հարցադրումները.

---

[10] https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-ontologiya-i-ee-metodologo-teoreticheskiy-kontekst/viewer

[11] **Անհաղթ** 1980, 36:

1) գոյություն ունի՞ «ազգային պետություն» որպես քաղաքական գոյ,
2) ի՞նչ է «ազգային պետությունը»,
3) ինչպիսի՞ն է «ազգային պետությունը»,
4) ինչի՞ համար է «ազգային պետությունը»:

Ինչ վերաբերում է գոյերը գոյացնողներին, ապա այստեղ Անհաղթը տեսնում է եռադաս նախահիմքը. արարիչ, բնություն և արվեստ: Գոյը դադարում է իրական, զգայական աշխարհում գոյություն ունենալ, երբ նրա մեջ ավարտվում է «ինչի համար է» հարցի պատասխանը, երբ մասնավոր գոյի մեջ վերջանում են և՛արարիչը, և՛ բնությունը, և՛ արվեստը: Մարդն իր ունեցած արժեքների մեջ պիտի կարևորի այդ եռադաս միասնության նպատակն ու օգտակարությունը:

Քանի որ բոլոր գոյերի արժևորողն ու գնահատողը մարդն է, հետևաբար, Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունից կարելի է հասկանալ, որ մարդուց պահանջվում է դրսևորել «եռակողմ» վարք: Մարդն իր քաղաքական վարքաբանության մեջ պետք է հաշվետվություն տա նախ արարչին, ապա բնությանն ու արվեստին: «Հայ ազգը» որպես քաղաքական գոյ, իրեն վերագրում է արարչական ծագում ու արարչական որակներ, հետևաբար նա պարտավոր է իր քաղաքական վարքում ապահովել այնպիսի նորմեր, կանոններ, օրենքներ, որոնք հաճո են իր գոյությունը պահպանող գործոններին՝ արարչին, բնությանն ու արվեստին:

Անցնելով փիլիսոփայության սահմանումներին, Անհաղթը գրում է. «Եթե որևէ մեկը ցանկանում է ճիշտ մտածել ու խորհել որևէ իրի մասին, նա ամենից առաջ պետք է գիտենա այդ իրի բնությունը, այսինքն սահմանումը: Որովհետև ով չգիտի սահմանումը, նա սխալ է մտածում բոլոր այն բաների մասին, որոնք բնականորեն բխում են այդ նույն իրից»[12]:

Առաջնորդվելով Դավիթ Անհաղթի այս խորհրդով, անդրադառնանք նրա ազգային «քաղաքական փիլիսոփայության» սահմանումներին:

«Եվ պետք է գիտենալ, գրում է Դավիթ Անհաղթը, որ փիլիսոփայությունը մի միասնական բան է, որպես ամբողջություն, և բազմակազմ է, որպես զանազան մասերից բաղկացած մի բան: Մենք կտանք նրա սահմանումը՝ որպես մի ամբողջության, և կբաժանենք՝ որպես բազմակազմ մի բան»[13]: Բազմա-

[12] **Անհաղթ** 1980, 46:
[13] **Անհաղթ** 1980, 46:

կազմ ասելով մեծ փիլիսոփան հասկանում է փիլիսոփայության տեսական ու գործնական մասերը:

Անհաղթը գտնում է, որ փիլիսոփայության սահմանումները վեցն են: Ըստ նրա, փիլիսոփայությունը 1) գիտություն է գոյերի մասին, 2) գիտություն է աստվածային և մարդկային իրողությունների մասին, 3) մտածմունք է մահվան մասին, 4) աստծուն նմանվելն է ըստ մարդկային կարողության, 5) արվեստների արվեստն է և գիտությունների գիտությունն է, 6) սեր է դեպի իմաստությունը[14]:

Փիլիսոփայությունը գիտություն է գոյերի մասին սահմանումից բխում է, որ **քաղաքական փիլիսոփայությունն էլ գիտություն է քաղաքական գոյերի մասին**:

«Փիլիսոփայությունը գիտություն է աստվածային և մարդկային իրողությունների մասին» սահմանմանը հետևելով, տեսնում ենք, որ. **քաղաքական փիլիսոփայությունը գիտություն է՝ աստվածային ու մարդկային քաղաքական իրողությունների մասին**:

«Փիլիսոփայությունը մտածմունք է մահվան մասին» սահմանումից տեսնում ենք, որ **քաղաքական փիլիսոփայությունը մտածմունք է «քաղաքական մահվան» մասին**:

«Փիլիսոփայությունը աստծուն նմանվելն է ըստ մարդկային կարողության» սահմանման միջոցով մենք իմանում ենք, որ փիլիսոփայությունը քաղաքագիտություն է, որովհետև քաղաքական փիլիսոփան ձգտում է և՛ գիտությամբ, և՛ գործերով ըստ մարդկային կարողության նմանվել աստծուն»[15], հետևաբար սահմանում ենք, որ **քաղաքական փիլիսոփայությունը աստծուն նմանվելն է ըստ մարդու քաղաքական կարողության**:

«Փիլիսոփայությունը արվեստների արվեստն է և գիտությունների գիտությունն է»: սահմանմանը հետևելով կարող ենք ասել, որ **քաղաքական փիլիսոփայությունը քաղաքական արվեստների**[16] **արվեստն է, քաղաքական գիտությունների գիտությունը**[17]:

---

[14] **Անհաղթ** 1980, 62–63:

[15] **Անհաղթ** 1980, 124:

[16] Քաղաքական արվեստներից են՝ քաղաքական փաստարկումը, քաղաքական բանավեճը, քաղաքական հրապարակախոսությունը, ճարտասանությունը, հռետորությունը և այլն:

[17] Ժամանակակից քաղաքական գիտությունները բազմաթիվ են՝ էթնոքաղաքագիտություն, համեմատական քաղաքագիտություն, կիրառական քաղաքագիտություն, հայրենական քաղաքագիտություն և այլն:

«Փիլիսոփայությունը սեր է դեպի իմաստությունը» սահմանմանը հետևելով կարող ենք ասել, որ **քաղաքական փիլիսոփայությունը սեր է դեպի քաղաքական իմաստությունը**:

Մինչև քաղաքական փիլիսոփայության բուն սահմանումներին անդրադառնալը նախ առանձնացնենք այն եզրույթներն ու հասկացությունները, որոնք հետազոտվում են ժամանակակից քաղաքագիտության կողմից. «**քաղաքական գոյ», «քաղաքական իրողություններ», «քաղաքական մահ», «քաղաքական կարողություն», «քաղաքական արվեստ», «քաղաքական գիտություն», «քաղաքական իմաստություն»**:

«**Քաղաքական գոյ**»-երի շարքում, Արիստոտելը մարդուն բնորոշում է որպես քաղաքական գոյություն: Քաղաքացիական հասարակության՝ պետության մեջ ապրող յուրաքանչյուր անհատ քաղաքական անձ է, քանի որ նա ընդգրկված է քաղաքականության մեջ, հետևաբար, քաղաքակիրթ պետության պարտականությունն է իր յուրաքանչյուր անդամի համար ապահովել արժանապատիվ կյանք[18]:

Իսկ Դավիթ Անհաղթը մարդուն սահմանում է որպես բանական կենդանի, մահկանացու, մտածելու և գիտությունն ընկալելու ունակ: Բնականաբար քաղաքական մարդն էլ պետք է սահմանվեր որպես քաղաքական բանականությամբ, օժտված քաղաքականացած մահկանացու, քաղաքական մտածողությամբ և քաղաքական գիտությունը ընկալելու ընդունակ կենդանի:

«**Քաղաքական իրողություններ**»-ի տակ կարելի է հասկանալ հասարակության վարչական և տարածքային կառուցվածքը, քաղաքական կազմակերպություններն ու քաղաքական իշխանության կրողները, հասարակության քաղաքական կյանքն ընդհանրապես[19]:

«***Քաղաքական մահ***» նշանակում է. «Հոգալ մահվան մասին, վարել առաքինի կյանք, զբաղվել կրքերի մահացումով: ...Ուշագրավ է, որ կրքերի սպանում ասելով Անհաղթը հասկանում է «փախուստ չարիքներից»[20]:

«Քաղաքական մահը» որպես պատիժ, առաջին անգամ Ռուսաստանում կիրառել է Պյոտր I-ը՝ քաղաքական հանցագործությունների համար մահապատժի փոխարեն: Նրա հրամանով այդ պատիժը կիրառվել է ոչ միայն քա-

[18] https://fil.wikireading.ru/9976

[19] https://mybiblioteka.su/tom2/5-88602.html

[20] **Անհաղթ** 1980, 76, 84:

ղաքական այլև քաղաքացիական հանցագործությունների՝ կաշառքի, կեղծ վկայության, բռնաբարության, և այլնի համար[21]:

Այսինքն, հասարակությանը չարիք պատճառող մարդկանց զրկում են հասարակության համակեցության իրավունքներից: «Քաղաքական մահվան մասին մտածել» ըստ Դավթի նշանակում է՝ որ մարդը իր վարքի մեջ մահացնելով բոլոր հակաօրինական ու հակապետական սովորույթները, կրքերն ու ցանկությունները, պետք է ապրի առաքինի ու օրինապահ վարքով և իրենից հեռացնելով չարիքը, պետք է նմանվի աստծուն՝ ըստ իր քաղաքական կարողության:

Իսկ «**Քաղաքական կարողություն»-ը կամ ունակությունը**[22], Պլատոնն անվանում է ըմբռնողություն[23]: Ըմբռնողություն, որը պարզագույն դեպքում ընկալվում է որպես քաղաքական երևույթները ըմբռնելու կարողություն:

Քաղաքական ըմբռնումները մարդկանց այն ընկալումներն են, որոնց հիման վրա ձևավորվում են նրանց քաղաքական գիտակցությունը, քաղաքական վարքը, վերաբերմունքը քաղաքական գործիչների և գործունեության նկատմամբ: Սովորաբար քաղաքական ըմբռնումների մեջ կարևորվում են՝ քաղաքական տեղեկատվությունը, դրանց իմաստների բազմանշանակությունը և դրանցից ակնկալվող սպասումները:

Քաղաքական տեղեկատվությունը իրենից ներկայացնում է բնակչությանը մատուցվող մատչելի գիտելիքներ, տեղեկություններ կառավարության, նրա գործառույթների և նպատակների մասին: Որքան քիչ է զարգացած հասարակության քաղաքական մշակույթը, այնքան ավելի շատ կարծրատիպեր ու նախապաշարմունքներ են պարունակում պատկերացումները, մարդիկ առավել ենթարկվում են քարոզչության ուղղակի ազդեցությանը, որը լի է գաղափարական կարծրատիպերով ու դրական գիտելիքներով:

Քաղաքական տեղեկատվության նշանակության կամ իմաստի պատկերացումները արտացոլում են բնակչության անձնական և հասարակական հետաքրքրությունները իշխանությունների և քաղաքական գործիչների նկատմամբ: Պատկերացումների այս տեսակը ժամանակակից մարդկանց մեջ նույնպես ձևավորում է քաղաքական պահանջների համակարգ, որը ներկայացվում է քաղաքական առաջնորդին, վերջինս էլ ապահովում է հետադարձ

[21] https://dic.academic.ru/dic.nsf/brokgauz_efron/95088/Смерть_политическая հասանելի է 10.09.2020

[22] **Պլատոն** 2017, 264:

[23] **Պլատոն** 2017, 264:

կապը զանգվածների հետ: Քաղաքական տեղեկատվության իմաստը պատկերացնելու շնորհիվ, լրատվամիջոցների միջոցով փոխանցվում է այն կարծիքը, որ քաղաքական ղեկավարը, իր անձնական հատկանիշների շնորհիվ (թեկուզ երևակայական), հենց այն անձն է, ով տվյալ պահին հարկավոր է հասարակությանը:

Տեղեկատվության ու դրանց իմաստի ընկալման հիման վրա ձևավորվում է ապագայի պատկերը, որում արտացոլվում է հասարակության մեջ գաղափարական, մարդկանց սոցիալապես ակտիվացնելու գերադասելի իրավիճակ: Ցանկալի ապագայի պատկերացումը, դրա մասին գաղափարները, պարունակում են քաղաքական արժեքներ, որոնք արտացոլվում են քաղաքական առաջնորդի ծրագրերում[24]:

«**Քաղաքականությունը արվեստ**» է, քանի որ այն առնչվում է սոցիալական գործընթացների սուբյեկտիվ կողմի հետ: Քաղաքականության սուբյեկտը՝ իրավունքների և պարտականությունների կրողը, հանդիսանում է քաղաքական ակտիվության աղբյուրը, պրակտիկ գործունեության կրողը, ով ուղղորդում է քաղաքականության օբյեկտին: Քաղաքականության սուբյեկտ կարող են լինել՝ անհատը, կոլեկտիվը, դասակարգը, ազգը, էթնիկ կամ կրոնական խումբը, հասարակական-քաղաքական կազմակերպությունը կամ շարժումը, քաղաքական կուսակցությունը, պետությունը և այլն[25]:

«Քաղաքականությունը գիտություն չէ. այլ արվեստ է», - իր ժամանակներում հայտարարում էր Գերմանիայի կանցլեր Բիսմարկը: Արվեստը, հենց ինքը՝ պետությունը կառավարելու արվեստն է, պետական վերահսկողություն իրականացնելն է հասարակության հանդեպ, որոշումների ընդունման և կատարման միջոցով[26]:

Ինչպես նշում է Պլատոնը, արվեստներն իշխանություն և ուժ են իրենց ոլորտում, ...հետևաբար քաղաքական արվեստը նկատի ունի այն, ինչ օգտակար է ոչ թե ուժեղին, այլ թույլին, որին և ղեկավարում է[27]:

Փաստորեն, ըստ փիլիսոփայական ընկալման, իշխանությունն արվեստ է, իշխողը արվեստագետ, ով կարողանում է իշխել և ղեկավարել:

---

[24] https://politike.ru/termin/obrazy-politicheskogo-vosprijatija.html հասանելի է 10.09.2020

[25] https://studbooks.net/556273/politologiya/politika_iskusstvo հասանելի է 10.09.2020

[26] https://studopedia.ru/10_221850_politika-kak-iskusstvo-gosudarstvennogo-upravleniya.html հասանելի է 10.09.2020

[27] **Պլատոն** 2017, 30:

«**Քաղաքական գիտություն**»-ը գիտություն է քաղաքականության մասին, այսինքն՝ մարդկանց կյանքի այն ոլորտի մասին, որը կապված է ուժային հարաբերությունների հետ, հասարակության պետական-քաղաքական կազմակերպության, քաղաքական ինստիտուտների, սկզբունքների, նորմերի հետ, որոնց գործունեությունը նախատեսված է հասարակության և պետության միջև հարաբերությունների ապահովման համար[28]:

Քաղաքական իմաստությունը նվազագույնը՝ պետության մեջ հասարակության ազատությունը համատեղելն է հասարակարգի հետ, իսկ առավելագույնը՝ պետության քաղաքականությունը էթիկային ենթարկելն է: Քաղաքական իմաստությունը ծլարձակվում է քաղաքագիտությունից[29]:

«Քաղաքական իմաստության ու իմաստասիրության» մասին Դավիթ Անհաղթը գրում է. «Եթե կա Աստված կա նաև իմաստասիրություն:...Եթե կա Աստված կա նաև նախախնամություն, քանի որ **Աստված ոչ միայն ստեղծում է, այլև խնամք է տանում ստեղծվածների նկատմամբ**: Ուրեմն, եթե կա նախախնամություն, կա և իմաստասիրություն, որովհետև նա **նախախնամում է ոչ թե անմտորեն, այլ իմաստուն կերպով**: Եվ եթե կա իմաստություն, կա և իմաստության բաղձանք: Եթե կա իմաստության բաղձանք, կա և սեր դեպի իմաստությունը: Եվ եթե կա սեր դեպի իմաստությունը. կա և իմաստասիրություն, որովհետև իմաստության հանդեպ սերը ոչ այլ ինչ է, եթե ոչ իմաստասիրություն»[30]:

Ասվածից գալիս ենք այն հետևության, որ **քաղաքական իմաստությունը խնամք տանելն է քաղաքական գոյերի ու ստեղծվածների հանդեպ,** ոչ թե անմտորեն, այլ իմաստուն կերպով:

Քաղաքական փիլիսոփայության կատեգորիաների վերլուծությունը վկայում է այն մասին, որ Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունից կարող ենք գնալ դեպի քաղաքական փիլիսոփայություն, իսկ վերջինիս մեջ քաղաքական տեսություն և պրակտիկա փնտրելը դառնում է իրատեսական:

Եզրակացություն

- Անդրադառնալով Դավիթ Անհաղթի փիլիսոփայության և նրանցից դուրս բերված քաղաքական փիլիսոփայության սահմանումներին, գալիս ենք այն եզրակացության, որ դրանք պարունակում են այնպիսի հասկացություն-

[28] https://studwood.ru/1057187/politologiya/politologiya_nauka_politike հասանելի 10.09.2020

[29] https://proza.ru/2010/06/08/1089 հասանելի է 10.09.2020

[30] **Անհաղթ** 1980, 44:

ներ ու եզրույթներ, որոնք արդի ժամանակներում ունեն քաղաքական և գիտական շերտեր, որոնք հանդիսանում են քաղաքագիտության հետազոտման նյութ:

- Դավիթ Անհաղթի «Քաղաքական փիլիսոփայությունը» կարող է դառնալ նաև **քաղաքականության տեսություն**, քանի որ նրա քաղաքական փիլիսոփայության սահմանումները կարող են այդ տեսությանը մատուցել դասականորեն մշակված վեց սահմանումները, որոնց առանձին-առանձին հետազոտությունը իրական նյութ կհանդիսանա թե՛ քաղաքագիտության, թե՛ քաղաքական պրակտիկայի համար:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Անհաղթ 1980, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 328 էջ:

Բրուտյան Գ. 1987, Տրամաբանության դասընթաց, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 510 էջ:

Մանուչարյան Հ. 1988, Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները, Երևան, ԵՊՀ հրատ., 135 էջ:

Նալչաջյան Ա. 2001, Էթնիկական հոգեբանություն, Երևան, «Զանգակ-97», 542 էջ:

Պլատոն 2011, հ. 3, թարգմ. Ս. Ստեփանյան, Երևան, «Անտարես», էջ 262:

Պլատոն 2017, հ. 4, Պետություն, թարգմ. Ս. Ստեփանյան, Երևան, «Անտարես», 440 էջ:

Տուրյան Վ. 2005, Քաղաքականության փիլիսոփայություն, Երևան, ԱՀԱ Պոլիգրաֆ, էջ 288:

Քաղաքագիտություն 2004, Հանրագիտական բառարան, Երևան, «Նժար», 488 էջ:

Волчкова О., Краснов А. 2019, Нормативно-теологические начала онтологии политического, Манускрипт, т. 12, вып. 3, 56–59 с.

Гончаров А. 2013, Политическая онтология: непосредственность и дискурсивность, Вестник Сыктывкарского университета. Серия гуманитарных наук, 40–56 с.

Карадже Т. 2017, Политическая философия, учебник, Москва, изд-во МПГУ, 644 с.

Лео Штраус 2000, Введение в политическую философию, Москва, изд-во М. Логос, Праксис, 364 с.

Поспелова О. 2009, Политическая онтология и ее методолого-теоретический контекст, Вестник Ленинградского государственного университета им. А.С. Пушкина. https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-ontologiya-i-ee-metodologo-teoreticheskiy-kontekst/viewer

https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-ontologiya-i-ee-metodologo-teoreticheskiy-kontekst/viewer

https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-ontologiya-i-ee-metodologo-teoreticheskiy-kontekst/viewer

https://dic.academic.ru/dic.nsf/brokgauz_efron/95088/Смерть_политическая
https://fil.wikireading.ru/9976
https://mybiblioteka.su/tom2/5-88602.html
https://proza.ru/2010/06/08/1089
https://politike.ru/termin/obrazy-politicheskogo-vosprijatija.html
https://ru.wikipedia.org/wiki/ Политическая_философия
https://studbooks.net/556273/politologiya/politika_iskusstvo
https://studopedia.ru/10_221850_politika-kak-iskusstvo-gosudarstvennogo-upravleniya.html
https://studwood.ru/1057187/politologiya/politologiya_nauka_politike
https://studylib.ru/doc/2326531/chto-takoe-politicheskaya-filosofiya

ДЕФИНИЦИИ «ПОЛИТИЧЕСКОЙ ФИЛОСОФИИ» ДАВИДА АНАХТА

ДАВТЯН М.

Резюме

Ключевые слова: Давид Анахт, политическое бытие, политическая способность, политическое искусство, политология, политическая реальность, политическая смерть.

Обращаясь к дефинициям философии Давида Анахта, приходим к заключению, что они основаны на таких концепциях и терминах, которые на сегодняшний день являются предметом исследования политологии.

«Политическая философия» Давида Анахта также может послужить основой теории политики, поскольку дефиниции его политической философии включают шесть классически разработанных определений, отдельное изучение которых может стать материалом как для политической науки, так и политической практики.

DEFINING DAVIT ANHAGHT'S "POLITICAL PHILOSOPHY"

DAVTYAN M.

Summary

Key words: David Anhaght, political being, political ability, political art, political science, political reality, political death.

Analyzing D. Anhaght's philosophy it can be concluded that his theories having derived from critically pivotal concepts and terms are studied within the frames of political science.

D. Anhaght's "Political Philosophy" can be defined as a basic political theory since it includes classical definitions which can be studied from the perspectives of political science and political practice.